Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
փետրվարի 2-ի N 72 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 19-ի N 277 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՇՆՉԱԾ ՕԴԻ ՄԵՋ ՄԱՔՈՒՐ ԱԼԿՈՀՈԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՁՆՆՈՒԹՅՈՒՆ (ՈՉ ՍԹԱՓ ՎԻՃԱԿՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ՓԱՍՏԻ ՍՏՈՒԳՈՒՄ) ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի «ժդ» ենթակետի հիման վրա ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու (այսուհետ՝ վարորդի սթափության վիճակի զննություն) հետ կապված հարաբերությունները:

2. Վարորդի սթափության վիճակի զննությունն իրականացվում է տեխնիկական միջոցով վարորդի արտաշնչած օդի հետազոտության միջոցով՝ օդի փորձանմուշները վերցնելուց անմիջապես հետո:

3. Վարորդի սթափության վիճակի զննություն իրականացնելու համար ոստիկանության ծառայողը տեխնիկական միջոց է մուտքագրում զննության ենթակա վարորդի անունը, ազգանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, տեղադրում նոր զննության խողովակ (մունդշտուկ) և առաջարկում վարորդին արտաշնչելու միջոցով անցնել սթափության վիճակի զննություն՝ նրան բացատրելով զննություն անցնելու (արտաշնչելու) ձևը:

4. Եթե վարորդի սթափության վիճակի զննության արդյունքում պետք է կազմվի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ապա տեխնիկական միջոցով կազմվում է (տպագրվում է) նաև վարորդի սթափության վիճակի զննության արձանագրություն՝ երկու օրինակից, որում պարտադիր նշվում են հետևյալ տվյալները՝

1) տեխնիկական միջոցի համարը.

2) տեխնիկական միջոցի վերջին ստուգաչափման օրը, ամիսը, տարեթիվը.

3) սթափության վիճակի զննության օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

4) ալկոհոլի պարունակությունը.

5) վարորդի անունը, ազգանունը.

6) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը.

7) սթափության վիճակի զննություն իրականացնող տեսուչի ազգանունը, կրծքանշանի համարը:

5. Վարորդի սթափության վիճակի զննության արձանագրության մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է վարորդին, իսկ երկրորդ օրինակը՝ կցվում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը:

6. Վարորդի սթափության վիճակի զննության արդյունքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմվում է, եթե նրա արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է նույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված չափը 10 տոկոսով (0.23մգ/լ կամ ավելի է), իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ՝ եթե նրա արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված չափը 10 տոկոսով (0.56մգ/լ կամ ավելի է):

7. Եթե վարորդի սթափության վիճակի զննության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվելու, ապա տեխնիկական միջոցով վարորդի սթափության վիճակի զննության արձանագրություն չի կազմվում (տպագրվում):

8. Եթե վարորդը խուսափում է (այդ թվում՝ հրաժարվելու միջոցով) սույն կարգին համապատասխան վարորդի սթափության վիճակի զննություն անցնելուց, ապա սթափության վիճակի զննությունն իրականացվում է սույն որոշմամբ նախատեսված բուժհաստատությունների կողմից՝ սույն որոշմամբ սահմանված կարգով, իսկ բուժհաստատությունում սթափության վիճակի զննություն անցնելուց խուսափելու (այդ թվում՝ հրաժարվելու միջոցով) դեպքում առաջանում է օրենքով սահմանված պատասխանատվություն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ